

Սյունիք



Համայնքի ղեկավար՝ Սամվել Մարգարյան

Ծնվել է ` 1952թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք գյուղում
1984թ. ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիկական ֆակուլտետը և ստացել գիտնական ագրանոմի որակավորում
Աշխատանքային գործունեություն`
1974թ. հանդիսացել է սովխոզի ԼԿԵՄ կոմիտեյի քարտուղար 1974- 1984թթ Սյունիք սովխոզում. կադրերի գծով տեսուչ
1985թ. Սյունիք սովխոզում կուսակցական կազմակերպության քարտուղար
1984- 1991թթ Սյունիք սովխոզում. գլխավոր գյուղատնտես
1991- 1994թթ Սյունիք սովխոզում. կոլեկտիվ տնտեսության ղեկավար
1994- 1996թթ Սյունիք գյուղխորհուրդի. նախագահ
1996թ- առ այսօր Սյունիք համայնքի ղեկավար
1992թ. հունվարի 3-ից մինչև 1992թ. դեկտեմբերի 28-ը ծառայլ է Կապանի երկրապահ ջոկատում և մասնակցել պաշտպանական ու մարտական գործողություններին , 1994 թվականին օգոստոս ամսին Կապան քաղաքին մեկ շաբաթով ապահովել է հացով, Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ է, լավագույն աշխատանքի համար արժանացել է ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կողմից մեդալի :
Ամուսնացած է ,ունեցել է 3 զավակ՝ երկու տղա մեկ աղջիկ: Տղաներից մեկը 1994թ. մահացել է պատերազմական գործողություններից:
Ունի 5 թոռնիկ՝ 3 տղա , 2 աղջիկ :